

ՀԱՅԵՐԵՆ ԱՂՋԻԿ ԲԱՌԻ ՍՏՈՒՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բանասիր. գիտ. դոկտոր Վ. Գ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

1. Հայերենում աղջիկ բառը գործածվում է V դարի գրավոր հուշարձաններում: Այն կազմված է աղիջ բառից —իկ փոքրացուցիչ-փառաբանական ածանցով: Աղիջ բառը ևս կիրառվում է վաղ շրջանից: Բառն ունեցել է մի քանի իմաստ՝ 1) «օրիորդ, կույս», 2) «դեռատի կին», 3) «նաժիշտ», իսկ ավելի ուշ շրջանում նաև՝ 4) «դուստր, ոչ արու զավակ»¹: Աղիջ ձևի նախնական է հղել աղին-ը, այսինքն՝ կիսաշփական ձայնեղ ջ-ն ֆոխսարինել է իր խուլ և-ին, հավանաբար ղ-ի ազդեցությամբ²:

Ենթադրվում է, որ —իկ ածանցով մի քանի բառեր, այդ թվում նաև աղջիկ բառը, նախահայերենում ունեցել են —իկն (<հ.-ե. *i-kon) հիմքի տաքթ, որովհետև հետագայում՝ գրաբարում, նման բառերը ենթարկվում են ներքին թեքման (օրինակ՝ ծաղիկ-ծաղկան, մանուկ-մանկան, աղջիկ-աղջկաճ և այլն), այսինքն՝ գրաբարում այդ և ձայնորդն ընկել է³:

Գրաբարում աղիջ բառը հանդես է գալիս ընդհանուր՝ «աղջիկ, օրիորդ, կույս» իմաստով⁴: Իսկ հետագայում բառն ունեցել է նաև այլ՝ «անտուկ, անբարո» իմաստը⁵, ինչպես կտեսնենք ստորև, հիշյալ բոլոր իմաստները հետագա ձեռքբերում են:

2. Աճառյան աղիջ (<աղին) բառը դիտում է իբրև «անտուկ բառ», իսկ մեկ այլ աշխատության մեջ՝ «խաղերենից» (ուրարտերենից) հայերենին անցած փոխառություն⁶: Գ. Ջահուկյանն իր վաղ շրջանի աշխատություններում չի տալիս աղիջ (<աղին) բառի ստուգաբանությունը⁷: Սակայն գրանցիդ առաջինում, կապված աղիւ և աղախին բառերի հետ, նշում է հետևյալը. «Մեյն աղախին-ը աղիջ «աղջիկ» բառի հետ միասին հանգցնում է հ.-ե. *ai-ին աղայ, մանրել, փշրել»⁸: Այս կարևոր նկատառումն ավելի ուշ անտեսվում է: Գ. Ջահուկյանը հետագայում մի կողմից՝ տալիս է աղիջ բառի նոր ստուգաբանություն՝ այն բխեցնելով հ.-ե. pā-lī-ձևից⁹, իսկ մյուս կողմից՝ Հ. Աճառյանի հետևությունները աղջիկ բառը բերում է ուրարտե-

1 Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. հ. 1, Երևան, 1971, էջ 129:

2 Նույն տեղում:

3 A. Meillet. Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936, p. 80. Գ. Ջահուկյան. Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան. Երևան, 1987, էջ 238, 356, 368:

4 Տիմոթեոս Կույ. Հակաճառություն. էջմիածին, 1908, էջ 283, այդև՝ Կնիք հատույ. էջմիածին, 1914, էջ 168 և այլն:

5 Եսսերես Կուարացի. ժամանակակից. Վենետիկ, 1818, էջ 204 և այլն:

6 Հ. Աճառյան, նշվ. աշխ., այդև՝ Հայոց լեզվի պատմություն. Երևան, 1940, էջ 184:

7 Գ. Բ. Ժապյան. Очерки по истории дописьменного периода армянского языка. Ереван, 1967, с. 121. Он же. Сравнительная грамматика армянского языка, Ереван, 1982, с. 122.

8 Գ. Բ. Ժապյան. Очерки по истории дописьменного периода армянского языка, с. 121, примеч. 95.

9 Գ. Ջահուկյան. Հայոց լեզվի պատմություն, էջ 145:

բենից հայերենի կատարած փոխառությունների շարքում՝ իբրև ընտանեկան հարաբերություններ նշանակող բառերից մեկը¹⁰։

3. Վերջին ժամանակներս կարծիք է հայտնվում այն մասին, որ հ.-բ. բարբառների մի մասում «կին» ղաղափարն առնչվում է «աղալ, հատիկը մանրել» նշանակության հետ (հ.-բ. *mel- «փշրել, աղալ, մանրել» և mul- կամ *mul- «հատիկմանրիչ, աղաց»։ հմմտ. լատ. mulier «կին» և այլն), իսկ հայ. աղջիկ «դեռատի կին» բառն առնչակից է դիտվում հայ. աղալ և աղալա՝ «աղաց, ալրաղաց» բառերին¹¹։ Այս նոր տեսակետի հեղինակները միաժամանակ գտնում են, որ հատիկն աղալու դործը բնատնտեսության հետ կապված երևույթ է, որով զբաղվում էր տանտիրուհին՝ կինը. սյդ առումով նշանակալից փաստ է գիտվում խեթ. գաղափարագիրը SAL NA' ARA, որ նշանակում էր «աղացուհի», բառացի՝ «կին-աղաց»¹²։ Հեղինակները գտնում են նաև, որ «աղաց, հատիկաղաց» երևույթն, ըստ հնագիտական տվյալների, հասնում է մինչև մ. թ. ա. V հազարամյակը (նկատի է առնվում Իրանի հյուսիսային տարածքը, նաև արտացոլումը ծգիպտոսի նյութական մշակույթի մեջ), ընդ որում այն նվիրյալ է թափանցում Մերձավոր Արևելքից¹³։

Կարծիք է հայտնվում նաև այն մասին, որ հ.-բ. բարբառների մի խմբում գործածվող *mel- «մանրել, աղալ» բառ-արմատի դիմաց բարբառների մեկ այլ խմբում, իբրև նորագոյացություն, հանդես է գալիս մեկ ուրիշը, որին էլ առնչվում է հայ. աղալ, աղալա՝ բառերի աղ- արմատը (հմմտ. հուն. ἀλέω «աղում եմ», ավեստ. aša-, այլև *arta-«ազագած», պարսկ ard «ալյուր», հինդ. և բենգալ. aṭa «ալյուր» և այլն)¹⁴։

4. Ինչպես նկատում ենք, հայ. աղջիկ (<աղիջ-իկ) և աղալ, աղալա՝ բառերը ծագումով մերձավոր են և կապվում են հ.-բ. բնատնտեսության մի որոշակի երևույթի հետ։ Սակայն այդ բառերում առկա հնագույն (նախազրային կամ վաղնջական) արմատը, որն է՝ աղ<*ալ), չի կապվում հ.-բ. *mel- արմատին, ուստի այն ուրիշ է։ Գամկրելիձեն և Վ. Իվանովն այդպիսի արմատ չեն առանձնացնում։ Իսկ դա չի նշանակում, որ հայ. աղալ, աղալա՝ բառերի ծագումը հայտնի չէ։ Ընդհակառակն, հայտնի է, որ այդ բառերը ծագում են հ.-բ. *al- արմատից¹⁵։ Գ. Ջահուկյանն աղալ-ը բխցնում է հ.-բ. *alā- արմատից, իսկ աղալա՝-ը բառը՝ հ.-բ. *alətrijō- ձևից՝ երկուսի համար ընդհանուր արմատ դիտելով հ.-բ. *al-, այսինքն՝ այն, ինչ տալիս են Հ. Հյուբշմանը և Հ. Աճառյանը¹⁶։

5. Հայ. աղալ բառին և նրանից կազմված ձևերին հատուկ ուշադրություն է դարձրել Ա. Մելիքն, երբ որոշակի կապ է տեսնում հայ. աղալ և հուն. ἀλέω բառերի միջև¹⁷։ Նշենք, որ այդ առնչությունը նկատվել է ավելի վաղ, անցյալ դարի կեսերին. նկատի ունենք Գ. Այվազովսկու մի հոդվածը, որում

¹⁰ Նույն տեղում, էջ 436։

¹¹ Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов. Индоевропейский язык и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры. I—II, Тбилиси, 1984, с. 692—693.

¹² Նույն տեղում, էջ 692—693։

¹³ Նույն տեղում, էջ 693—694։

¹⁴ Նույն տեղում, էջ 693։

¹⁵ Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 118։

¹⁶ Sht. H. Hübschmann. Armenische Grammatik. Bd. 1—2, Leipzig, 1895—1897, S. 414; Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 118։

¹⁷ A. Meillet. Remarques étymologiques.—Revue des études arméniennes, 4, 1924, pp. 4—6. այլև՝ Ա. Մելիք. Հայագիտական ուսումնասիրություններ. Երևան, 1978, էջ 227—228։

մատնացույց է արվում հայ. աղալ և հուն. ἀλά «աղալ» զուգադիպումը¹⁹, Հետադարձում ուրիշ հեղինակներ են անդրադարձել են այդ առնչությանը²⁰, Սակայն Ա. Մելեն հարցի քննությունը տալիս է իր ամբողջության մեջ՝ կապված հ.-հ. երևույթի տարածվածության (բարբառային տարբերակվածության) հետ։ Նա դանում է, որ հ.-հ. բարբառների հյուսիսարևելյան խումբը (բալթիական, սլավոնական, դերմանական, կելտական, իտալյան, ալբանական) «աղալ, աղաց» իմաստի համար գործածելիս է եղել *mel- արմատը, իսկ արեւելյան խումբը (հնդկական, իրանական, հունական, հայկական)՝ *al- արմատը։ Ըստ այդմ հ.-հ. լեզուների բարբառային տարբերակման մի կարևոր, անշրջանցիկ հատկանիշն էլ հանդիսանում է «աղալ, աղաց» իմաստի համար երկու՝ *mel- և *al- արմատների դոյությունը։

6. Ա. Մելենի նման տարբերակումը վերաբերում է հ.-հ. *al- արմատին, այնինչ հայերենն ունի հ.-հ. ծագման բառեր, որոնք առնչվում են մյուս՝ հ.-հ. *mel- արմատին։ Այսպես, հայ. մալ- «մանրել, փշրել» արմատը ծագում է հ.-հ. *mel- արմատից և հայերենում հանդես է գալիս բազմաթիվ ձևերով (մալել «մանրել, մաշել, ջարդել», այլև՝ «կոտել, ամորձատել», մուլ-արմատը, որից՝ մյաղագ «ջրաղացական», մլմլել «շփել, քերել», մամուլ «սուպադրական ճնշիչ դորժիք», մեղ- արմատը, որից՝ մեղ-կ, մեղ-մ բառերը և այլն)²⁰, Ավելացնենք, որ հայ. բարբառներում ևս կան զգալի թվով բառեր, որոնք ծագումով կապվում են այդ արմատին։ Իսկ այս հատկանիշով հայերենը մտնում է Ա. Մելենի առանձնացրած հյուսիսարևելյան խմբի մեջ։

7. Ի մի բերելով պատմամշակութային և լեզվական փաստերը՝ նկատում ենք, որ հայ. աղբիւր բառը, որի նախնական է աղից (<աղիճ) ձևը, հանդում է հ.-հ. *al- արմատին։ Ըստ այդմ, հայ. աղբիւր (<աղից<աղիճ) բառի աղ- (<*ալ-) արմատն ամենանախնական իմաստով նշանակել է «երկանքով աղացող՝ աշխատող տնայնուհի»։ Հետադարձում այդ իմաստը կոնկրետացել է, այսինքն՝ «բնատնտեսությանը վերաբերող զբաղմունք ունեցող իգական սեռի անձ» նշանակությունից առանձնացել են «կին, ոչ արու զավակ», այնուհետև՝ «օրիորդ, կույս», ավելի ուշ՝ «անառակ, անբարո կին» իմաստները։ Իմաստային նման առանձնացումը եղել է լեզվի տեղական զարգացման հետևանքով։ Սկսած առնվազն V դարից՝ հայ. աղբիւր (<աղից<աղիճ) բառն արդեն նոր իմաստներով, նոր նշանակությամբ է գործածվում։ Վերջինս տմբադրվում է հայերենի գրավոր ավանդույթով և նույնանում է արդի հայերենի բոլոր տարբերակներում հանդես եկող իմաստի հետ։

8. Հայ. աղբիւր (<աղից<աղիճ) բառի այս նոր մեկնաբանությունը կարելի է սպառիչ համարել, եթե հավաստիորեն մեկնաբանվի նաև բառի մյուս մասը՝ -ից (<-իճ) բաղադրիչը։

Հայերենում ունենք բառեր, որոնցում կա այդ -իճ մասնիկը. օրինակ՝ աղաւնիճ «մի տեսակ խոտ», աւտիճ «արտում բուսնող մի տեսակ խոտ՝ մոլախոտ», լուիճ «յու միջատը», կապիճ «1. հատով հաշվելի ապրանքի մի չափ, 2. սրունքների պատող դոհ», կուիճ «չոր կավ», կոպիճ «խիճ, քարի կտորտանք», փաւիճ «կուտ», պատաւիճ «բաղնիք», պաւիճ «1. կեղև, կճեպ, 2. սոնապան, 3. կնճիթ», ուտիճ «դեղ» և այլն²¹,

Հայերենում այս -իճ մասնիկն ունեցող բառերը պատմականորեն և բառակազմորեն բաժանվում են մի քանի խմբի. 1) բառեր, որոնք առ այսօր մնում են շտուգաբանված, թեև զրանցում առանձնացվում է -իճ ածանցը (օրինակ՝ աղաւնիճ, աւտիճ, կաւիճ, կոպիճ, փաւիճ, պատաւիճ, պաւիճ)։

19 Գ. Այվադովսկի. Յաղազս հնման լ տառին. Թեոդոսիա, 1852, էջ 15։

19 Հմմտ. Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 118։

20 Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, հ. 3, էջ 225։

21 Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, հ. 1—4, էջ 122, 343, 299, 525, 568, 636, 51, 34, 41—42, 612։ Գ. Զահուկյան. Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն. Երևան, 1989, էջ 308։

2) բառեր, որոնք ունեն հ.-հ. ծագում (օրինակ՝ լուիճ <հ.-հ. *plusos, ուտիճ <հ.-հ. *ōd-), 3) բառ, որն իրանական փոխառություն է. կապիճ <պահլ. kaplč: Բերված բառերից հ.-հ. ծագում ունեցողները չունեն -իճ մասնիկն արտացոլող տարր, իսկ իրանական փոխառություն համարվող կապիճ-ն ունի այդ տարրը: Սրանից թերևս հնարավոր է ենթադրել, որ -իճ մասնիկը հետագա գոյացություն է և հայերենին է անցել իրանական լեզուներին բնորոշ մասնիկի բառակազմական ընդհանրացման ճանապարհով: Նման վարկածի օգտին է խոսում այն փաստը, որ շտուգաբանված բառերի մեջ (հմմտ. կաւ-իճ, հատ-իճ, պատ-իճ և այլն) պարզ արմատ են կաւ, հատ, պատ և այլն բաղադրիչները:

9. Եթե հիշյալ բառերում, բացի կապիճ բառից, -իճ մասնիկը իրանական ազդեցության արդյունք չէ (համաբանության օրենքով, որ ածանցման դեպքում բավական դժվար է), ապա թերևս կարելի լինի իբրև վարկած առաջ քաշել այն գաղափարը, համաձայն որի հայերենում ևս նախագրային կամ վաղնջական շրջանում գործածվելիս է եղել իրանական -ič բաղադրիչին ծագումով մոտ (հ.-հ. շրջանից եկող) մի ածանց: Վերջինս կարող էր լինել ոչ միայն աղիջ (<աղիճ) բառում, այլև թերևս կոպիճ <կոպ-իճ (հմմտ. կոպ-առ «սահման», այսինքն՝ «կիսված, բաժանված») և նման բառերում՝ իբրև նախնական կազմության բաղադրիչ և ոչ թե հետագա ածանցական հավելում:

10. Այսպիսով, կարելի է կարծել, որ հայ. աղջիկ (<աղիջ <աղիճ) բառն ունի հ.-հ. ծագում, բխում է հ.-հ. *al- արմատից՝ իբրև «բնատնտեսության մեջ զբաղվող անձ, ընտանիքի մի տնտեսուհի» հասկացության անվանում: Նախկինում շտուգաբանված, վերջին ժամանակներս հ.-հ. *pə- 11-ձևից բխեցվող հայ. աղիջ (<աղիճ) բառի համար ավելի հավանական և հիմնավոր է հ.-հ. *al-ից բխեցնելը, եթե բառի ստուգաբանությանը մոտենում ենք թե՛ լեզվական և թե՛ պատմական-մշակութային տեսակետից: